ԿԱՅԱՑԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

11.10.2017 22:44

2017թ. հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբանական գրասենյակների ղեկավարների հետ հանդիպում:

Հանդիպմանը փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ներկայացրել է փաստաբանական գրասենյակների ակումբ ստեղծելու, էքսպո ցուցահանդես կազմակերպելու և այլ հարցերը, որոնք քննարկվել են մասնակիցների կողմից:

Ելույթներով հանդես են եկել փաստաբանական գրասենյակների ղեկավարներ (ներկայացուցիչներ) փաստաբաններ Արմեն Տեր-Տաճատյանը, Թաթուլ Խուդատյանը, Արթուր Դավթյանը, Տարոն Սիմոնյանը, Կարեն Սարդարյանը, Սեդրակ Ասատրյանը, Կարեն Աղաջանյանը, Վանիկ Մարգարյանը, Հայկ Էդիսոնի Հարությունյանը, Հայկ Հովհաննիսյանը:

Առաջարկվել է փաստաբանական գրասենյակների ակումբը ստեղծել, որպես ազատ քննարկումների հարթակ, առանց կազմակերպչական հատուկ կառուցվածքի:

Փաստաբանական գրասենյակների էքսպո ցուցահանդեսը կազմակերպելու գաղափարն ընդունելով մասնակիցները որոշել են լրացուցիչ քննարկումներով սահմանել անցկացման ձևաչափը և պայմանները:

Քննարկվել են նաև փաստաբանական գրասենյակների զարգացմանը խոչընդոտող որոշ հարցեր, մասնավորապես դատական ծախսերի մեջ ներառող փաստաբանի վարձատրության ողջամիտ վճարի հարցում դատարանների ոչ միատեսակ և բացասական երևույթը, պետական մարմինների կողմից փաստացի «խորհրդատվական ծառայություններ» մատուցելու միջոցով իրավական դաշտը խեղաթյուրելու բացասական երևույթը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })